Կետ 27

1. Երրորդ փուլի միասնական քննությունների և երկրորդ փուլի մասնագի- տության դիմում-հայտերը (այսուհետ՝ դիմում-հայտ) լրացնելը և մուտքագրելը՝

1) օտարերկրացիները, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատու- թյունները տվյալ ուսումնական տարում ավարտած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, տվյալ տարվա ամառային զորակոչից զորացրված կամ մինչև հուլիսի 31-ը զորացրվող դիմորդները երրորդ փուլի միասնական քննությանը մասնակցելու և ընտրած մասնագիտությունը նշելու համար ԳԹԿ-ի կայքում հունիսի 26-ից մինչև հուլիսի 1-ը՝ մինչև ժամը 17:00-ն լրացնում են ընդունելության դիմում-հայտ: Դիմորդներն ընդունելության դիմում-հայտը լրացնելու համար դիմում են իրենց բնակության վայրին մոտ ԳԹԿ-ի կողմից առանձնացված դպրոց՝ անձնական համար ստանալու: Երրորդ փուլի միասնական քննությունները կազմա- կերպվում են Երևանում: